6. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից ներկայացվել է 60.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր, և Դատարանը հաշվի առնելով հայցի բավարարումը, գտնում է, որ դատական ծախսերը պետք է կրի Պատասխանող կողմը, հետևաբար Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՄՏԿ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բավարարել: Անվավեր ճանաչել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «մեկուսիչ նյութերի» ձեռքբերման նպատակով վերջինիս կողմից հատարարված թիվ 125/Garm/24_4.3_066/29.03.24 ծածկագրով մրցակցային ընտրության հրավերը:

2. Որպես դատական ծախս՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից հօգուտ «ՄՏԿ» ՓԲ ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու

օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am